

տրեսան ինքն էլ է ընդունում, որ Բաֆֆին տեղ-
դեղնեցող վիպագրող էր. ուրեմն շատ հարկա-
ւոր էր աւելի երկար կանգ առնել եւ աւելի
բազմակողմանի կերպով լուսարանել տեղեկ-
ցիաները այն շրջանը, որտեղից Բաֆֆին քա-
ղզում էր իր գաղափարները: Եթէ յօդուածա-
գիրը գրանց արած չը լինէր այս հանգամանքը,
այն ժամանակ նա կը մտնէր տարբեր աշխար-
հայեցողութիւնների այն խիստ ընդհարումների
մէջ, որոնք սկսվեցան մեզանում 1877—1878
թւականներէից յետոյ, ընդհարումներ, որոնք
խիստ հետաքրքրական եւ բնորոշ են մեր նո-
րագոյն կեանքի համար եւ որոնց մէջ Բաֆֆին
կատարել է մարանչող գիւտերի դերը:

Այստեղ մենք չենք կարող աւելի մանրա-
մասն խօսել այդ յօդուածի մասին: Անցնենք
ամազգի միւս յօդուածին, որ կրում է «Հայոց
պարբերական մամուլը 1900 թւին» վերնա-
գիրը: Այդտեղ ամապիրը աշխատում է ամ-
փոփ տեղեկութիւններ տալ հայոց բոլոր պար-
բերական հրատարակութիւնների մասին: Թող-
նում ենք «Մշակին» նուիրված համակրական
տեսութիւնը: Վերջին ժամանակներս մեզա-
նում սպեղը գրգռում են, երբ ամենքին
յայտնի մի ճշմարտութիւն է յայտնվում
«Մուրճ» ամսագրի մասին: Ուստի այդ դերա-
գրքի պարտնների համար գուցէ աւելորդ չը
լինի բերել այստեղ ուսւ ամսագրի մի քանի
խօսքերը:

Մենք շատ ցաւում ենք—ասում է նա,—
որ հայոց միակ հաստ ամսագիրը, որ իր
կեանքի առաջին տարիներում վայելում էր
հասարակութեան համակրանքները եւ շատ
տուեց լաւ նիւթեր ընթերցանութեան հա-
մար—գնալով մի գլուխ փոքրացնում էր իր
աշխատակիցների շրջանը եւ հին խմբագրու-
թեամբ հրատարակման վերջին տարին հան-
գաւ, ոչ ոքին ամսագրի չը պատճառելով:

Մի նկատողութիւն հայոց մամուլի տե-
սութիւն կազմողին: «Հանդէս Ամսօրեայ» ամ-
սագիրը թէեւ, ճիշդ է, տալիս է պատմութեան,
մատենագրութեան վերաբերել յօդուածներ,
բայց չունի աստուածաբանական բաժին եւ
մասնաւոր չէ գործ ածում «հին հայերէն լե-
զուն», եթէ այս բաների տակ յօդուածագիրը
հասկանում է գրաբարը: «Հանդէս Ամսօրեայ»
գործ է ածում աշխարհաբար լեզու, մի աշ-
խարհաբար, որ, ի դէպ է աւել, արեւմտեան
հայերի մէջ ամենից շատ կանոնաւոր եւ ու
հնչող հասկանալի է:

ԳԼԽԱՆՈՐ ՄԱՍՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԸ

Երկուշաբթի, յունվարի 8-ին, Թիֆլիսի նա-
հանգապետ Սվիզինի ընկալարանում տեղի ու-
նեցաւ երկրաշարժից վնասվածներին օգնող
գլխաւոր մասնաժողովի նիստը:

Մանրամասն հաշիւից, որ կազմված էր առ
1 յունվարի ներկայ 1901 թուի, երեւաց, որ
ընդամենը մտել է մասնաժողովի դրամարկը
նրա հիմնվելուց մինչեւ այժմ 216,057 ռուբլի
57 կօպէկ, որից մնացել է չը ծախված 116,256
ռուբլի 33 կօպէկ գլխաւոր մասնաժողովի ձեռ-
քին եւ 1775 ռուբլի 42 կ. Արաբալաքի տե-
-

Դարձեալ ահա ձեզ հազարից մի օրինակ:
Նաւթային մայրաքաղաքում գոյութիւն ու-
նեն մի շարք արհեստանոցներ, փայտեղէնների
պրիստաններ, սինթիլական պահեստներ, մե-
քանիկական մագաղիներ, երկաթեղէնների եւ
այլ եւ այլ կարգի սպրանքների խանութներ,
որոնք նաւթահանքերին եւ նաւթագործարան-
ներին հազար եւ մի տեսակ սպրանքներ են
մատակարարում:

Վաճառականները, բայց թողնելով ֆիրմային
սպրանքներ, նրանց գործակատարների, մե-
խանիկների ու տնտեսական մասի վերահսկող-
ների միջոցով, սովորութիւն ունեն ամսավեր-
ջը վարձարել այդ սպրանքներին, տալով նրանց
5—10 տոկոս գնած սպրանքների ընդհանուր
արժէքի գումարից: Ինչ առի կուզէ, որ վա-
ճառականները տուած տոկոսները կրկնապա-
տիկ, քառապատիկ չափով հանում են ֆիրմայի
մէջը, որովհետեւ կաշառելով գործակատար-
ներին, մեխանիկներին եւ տնտեսական մասի
կառավարիչներին, նրանք հնարաւորութիւն են
ստանում թէ ապրանքները թանց գնով հա-
շուել ֆիրմաներին եւ թէ վատ, հին, փչացած
սպրանքները լաւի տեղ ճաղաչանը...

Այժմ երեւակայեցէք ձեզ տոկոս վերցնող
բոլոր գործակատարներին, մեխանիկներին, տըն-
տեսական մասի վերահսկիչներին, հարկաւ,
թողնելով բացատրութիւնները, երեւակայեցէք
ձեզ տոկոս առողջ բոլոր վաճառականներին,
դարձեալ թողնելով բացատրութիւնները, եթէ
միայն կան, եւ դուք կը ստանաք ահագին

ղական մասնաժողովի ձեռքին: Գումարները
գրված են բանկերում եւ չահեցնում են 4%
տոկոսով: Գումարների մի մասը, որ գտնվում
էր գանձապահ Ա. Մանթաշեանի ձեռքին, չա-
հեցրված է 6 տոկոսով:

Ներկայ յունվար ամսին նուիրաւորութիւն
ստացվել է միայն մի տեղից, այն է Երեւանի
հայոց թեմական առաջնորդից՝ 515 ռուբլի:

Դրամական հաշուի պարզվելուց յետոյ մաս-
նաժողովը քննեց այն հարցը, թէ ինչ կերպ կա-
րելի է շահագործել այն անտառափայտը, որ
նուիրել է գանձարանը Արաբալաքի գաւառում
վնասվածների օգտին: Մասնաժողովի նպատա-
կըն է այդ փայտը ձեռք բերելու համար աշխա-
տեցնել Արաբալաքի գաւառի կարօտ եւ չքա-
ւոր գիւղացիներին եւ նրանց տալ այդ ձեռով
վաճառել եւ նպատու Մասնաժողովը լսելով պ. պ.
Քալանթարի, Բուտկելիի, Բուրնիսանցի եւ
Նեվսկու բացատրութիւնները, որոնց հրաւիրել
Արաբալաքի տեղական անտառապետներին խոր-
հրդակցութեան եւ որոնել մասնաւոր անձանց,
որոնք յանձն առնէին կազմակերպել փայտ կո-
տորելու գործը: Մասնաժողովը այն կարծիքի
է, որ, եթէ այդ գործը այնպէս կազմակերպվի,
որ գիւղացիները ունենան տաք պատասպարան եւ
կերակուր, գործը կարող է աղողվել: Անտառ-
ներից պէտք է կոտորվի 3240 ծառ:

Նահանգապետը առաջարկեց հրատարակել
մասնաժողովի գործունէութեան համարում հա-
շիւը Ա. Յովհաննիսեան առաջարկեց նաեւ կաղ-
մել այդ գործունէութեան մանրամասն հաշիւը
առանձին քրօշիւրով: Երկու առաջարկութիւն-
ներն էլ ընդունվեցին:

Այնուհետեւ մասնաժողովի քննութեան ա-
ռարկի դարձաւ Արաբալաքի գաւառի աղքա-
ւեանութեան այն մասի վիճակը, որ վնասվել է
անըրրիութիւնից:

ՀԱՅՈՑ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐԸ ԲԱԳՒՈՒՄ

Վառապան Հենչէյ, գրտմա 5 արարուածով,
հեղ. Հաւապմանի, Թարգ. Յ. Աբելեանի:

Ահա մի երկ, որի մասին կարելի է ասել,
որ դանակով կարված կտոր է կենդանի կեան-
քին, որի մէջ Հաւապման համում է Դիկ-
կիսի՝ հարտատարված եւ զրկված դասակար-
գների անմասն նկարագրի նրբութեան եւ խո-
րութեան: Կեանքի դրաման միայն փքուն անուն-
ների եւ բարձր դասակարգերի հետ չէ կապ-
ված. նրա այսպէս անտանված ստորին խաւե-
րում տեղի ունեն երեւոյթներ որ սակաւ զօ-
րեղ—նոյնպէս մերթ հիացման արժանի, մերթ
ստակալի Իսկ որ ամենազլխաւորն է, այստեղ
պիտի փնտրել ժամանակակից շրջանի տիրա-
պետող գործունէութիւնը խօսքը, որովհետեւ
այդ խաւերի վրա է ճնշում կեանքը իր բոլոր
ծանրութեամբ: Ահա որպիսի տպաւորութիւն է
թողնում եւ որպիսի մտքեր է յարուցանում
Հաւապմանի դրաման կառապան Հենչէյ մի
զօրեղ կամքի տէր, վստահ իր ոյժերի վրա,
երկաթի նման ամրացած չարքալ կեան-
քի մէջ եւ անկրկիւղ դէպի կեանքը բնաւ-
ութեւն է: Բայց կեանքը վերջ ի վերջոյ խոր-

քանակութեամբ երկու սերիայի որոշ կարգի
գողեր: Անկեղծօրէն խոստովանված, համեմա-
նած այդ պարտնների հետ, պրօֆեսիօնալ գո-
րծը պէտք է որ աւելի բարձր բարոյականութե-
ան տար մարդիկ լինեն, որովհետեւ վերջին-
ները իրանց աննախանձելի փեշակը գործադ-
րում են ժամանակ առ ժամանակ, չարքալը,
ամիսը, տարին մի անգամ, յաճախ ստիպված
կարիքից, աղքատութիւնից, նախապիկով ի-
րանց կեանքը բիւլի, վտանգ... մինչդեռ մեր
յիշատակած երկու սերիայի հերոսները գողա-
նում են անընդհատ, ամեն մի օր, իւրաքան-
չիւր մի ժամ, ձիւր տարիների ընթացքում, ոչ
թէ ստիպված կարիքից, այլ ղեկավարվելով
10 կամ 100 հազարանոց կարողութիւնը աւելի
մեծացնելու ազատութեամբ, վերջապէս առանց
ենթարկվելու մազաչափ բիւլի: Ի՞նչ բիւլ, քա-
նի որ վաճառականների ու գործակատարների
մէջ տեղի ունեցող տոկոսներ տալ-ստանալու
մանրալուրջանք Բագու ոչ ոք գողութիւն չէ
համարում. ամենքը, անգամ ֆիրմայի տէրերը
այդ կարգի գողութեան վրա նայում են չափից
դուրս թեթեւ կերպով, մասնորի արանքով...
Եւ այդպէս, ընթացող, խօսելով ընդհանրա-
պէս եւ թողնելով մասնաւորութիւնները, Բա-
կուի նաւթարդիւնաբերական—առեւտրական
աշխարհը ներկայացնում է մեզ պաշտօնական
եւ ոչ պաշտօնական, յայտնի եւ անյայտ, մեծ
եւ փոքր գողերի ահագին մի կօլլեկցիա, դա-
սաւորված հասարակական սանդուղքի բոլոր
աստիճանների վրա,—սկսած համեատ խանութ-

տակում է նրան առնաւորակալի վախճանով:
Նոյն կեանքի զրկանքների եւ հարտատարու-
թիւնների մէջ կազմվում են կատաղած բնաւ-
ութիւններ, որոնք աւերմունք եւ դժբաղդու-
թիւն են սփռում իրանց շուրջը: Սրբ այդպիսի
բնաւորութիւնները հնարաւորութիւն են օտա-
նում յազգեցնել կեանքի ծարաւը, բաւարարու-
թիւն տալ մանկութիւնից ճնշված եւ խեղդված
զգացմունքներին, նրանք պատրաստ են անցնել
ուրիշների մինչեւ իսկ ուղիների վրա. այդ-
պիսի բնաւորութիւնները մի տեսակ նախա-
դրույթութիւններ են հասարակութեան համար,
թէ անհաւասարութեան եւ զրկանքների վերջին
եղբայրացութիւնը ինչ է, եւ թէ թշուառու-
թիւնը եւ զրկանքը միշտ գործելով չեն վեր-
ջացնում իրանց գործը, այլ երբեմն պատրաս-
տում են եւ ստակալի դահիճներ շրջապատող-
ների համար:

Այդ տեսակ մի տիպ է պիեսայի միւս կենտ-
րօնական անձնաւորութիւնը—աղախին Հան-
նան: Հաննան շատ վաղուց չը գիտէ, թէ ինչ
է հայրենի յարկ, դառն աղքատութեան մէջ
ստիպված է եղել դեղերով դռն դուռ, դեռ
մանուկ անփորձ հասակից սկսած: Անտէր եւ
անօգնական, զուրկ որ եւ է կրթութիւ-
նից, զայլակողութիւններով լի կեանքի մէջ նա
կորցնում է իր կրօնութիւնը, զաւակ է ունե-
նում, որից նա խուսափում է ինչպէս ծան-
տախտից, որովհետեւ նրա ներկայութիւնը ա-
ւելի անտանելի կարող է դարձնել նրա առանց
այն էլ անտանելի կեանքը: Նրա վերջին ապաս-
տարանն է Հենչէյի յարկը, ուր մտնում է նա
իբրեւ աղախին: Եւ ո՞վ կարող էր ենթադրել,
որ այդ պատահական, բոլորովին անօգնական
եւ անգոր անձնաւորութիւնը հանրիստանալու է
իբրեւ Հենչէյի եւ նրա տան ճակատագիրը:
Մի մարդ միայն նախադրում է այդ—դա Հեն-
չիլի մեղսող կինն է, որը իր ամուսնուց խօսք
է անունը չամուսնանալով միւս անգամ: Բայց
անգոր Հաննան մի ղէջք ունի—գեղեցկու-
թիւն, որը ժամանակակից Եւրօպայի անպա-
հով օրիորդի համար միշտ միակողմանի կորս-
տաբեր չէ. միշտ այնպէս չէ նրա հետեւանքը,
ինչպէս ասում է Փառաստի կիսացնորով:
Գրեթէնքը բանտում ազանիճ, մի բան էի ու-
զում սանի, սոսցայ, ոչ, ոչ, ինչեցի, մի ժա-
մանակ եւ գեղեցիկ էի, եւ նա, իմ գեղեցկու-
թիւնը եղաւ իմ կորստեան պատճառը:

Արդէն առաջուց հետաքրքրված Հաննայով,
Հենչէյը վճռում է ամուսնանալ նրա հետ իսկ
Հաննան առանց մի որ եւ իցէ ներքին տա-
նանման ընդունում է նրա առաջարկութիւնը,
չը նայելով, որ ոչ մի զգացմունք չէ տածում
արդէն դէպի միջին հասակը անցած Հենչէյը:
Նա ցանկանում է ապրել ինչ գնով էլ որ լինի:
Ամուսնանալով Հենչէյի հետ, նա ոչ մի պար-
տաւորութիւն չէ զգում: Հենչէյը միայն մի
միջոց է նրա ցանկութիւնների իրագործման
համար, չենք ասում նպատակների, որովհետեւ
մութ, սղէտ, զուրկ դաստիարակութիւնից եւ
կեանքի բոլոր փորձանքներին մասնավոր Հան-
նան կեանքի ոչ մի ծրագիր չունի: Եւ ամուս-
նութեան հէջ սկզբից նրա անսանձ բնաւորու-

պանքից, վերջացած միլիոնատերերով,
սկսած անգրագիտ գործակատարներից եւ վեր-
ջացած համարաբանական կառավարիչներով...
Յուաւի, վերին աստիճանի ցաւալի է այդ
խոստովանվածը, բայց կրկնակի ցաւալի է այն,
որ այդ գողերը, այդ սիրահաչակ հերոսները
հասարակութեան լսազօյն մասի կողմից զը-
գուանքի, արհամարանքի, հալածանքի փոխա-
րէ, վայելում են սէր, յարգանք, գրկաբաց
ընդունելութիւն... Լիւրձնաօվի կրօնական
խօսքերը—«Бъ добру и злу постыдно равно-
душны,—կամ Փառաստով ոչ պակաս կաթի-
կական խոստովանութիւնը

Кто хочет къ намъ пожаловать—изволь,
Дверь открыта для званныхъ и незванныхъ,
Хоть честиныя челоуки, хоть инопъ,
Для насъ равнозачно,—про вѣжъ готовъ
обѣдъ.

ոչ մի տեղ չեն չնչում այնպիսի դառն ճըշ-
մարտութեամբ, ինչպէս Բագուում: Եւ իրաւ-
անա ձեզ համայնարանական մի կառավարիչ,
որ նոր է ազատվել բանտից... Բայց եւ այն-
պէս, նրա ծանօթ ընկեր բոլոր ինժեներները,
տեխնօլոգները մազաչափ չեն փոխել իրանց
յարաբերութիւնը դէպի նրան եւ շարունա-
կում են կողք կողք բազմած կեանքի խնջոյ-
նում, միասին վայելել կեանքի քաղցրութիւն-
ները, միասին այցելել ամենապատուաւոր ըն-
տանիքները... Անցլիայում, հանձարեղ մի Պար-
նել, եւրօպական հոյակ վայելող մի Չարլզ—Դիկ
վայր են զլորվում հասարակական—քաղաքա-

թիւնը ոչ մի բանի առաջ կանց չէ անում:
Նա անմիջապէս կապվում է առաջին պատահած
երիտասարդի հետ, որը նրան զուր է գալիս,
թէեւ նա մի օտար եւ փչացած լաբէլ է: Բա-
րոյական մօտեցումը չեն նկատում Հաննայի ոչ
մի մտածմունքի, ոչ մի զգացմունքի, ոչ մի
վճռի մէջ: Խղճի օտարը գեւ չը բողբոջած մե-
ռել է նրա մէջ: Այլ արդեն չէին կարող տալ
նրա կեանքի պայմանները: Առում ենք՝ մեռել
է, որովհետեւ մենք համոզված ենք, որ Հա-
նուպման ատափառ չէ ցանկանում ներկայաց-
նել ի դէմ Հաննայի: Դա արդէն կը լինէր ոչ
գրական կեանքի օրիժեսու Հաննան ոչ միայն խղճի ոչ
մի խայթոց չէ զգում այն բանից, որ օտար տակ է
տալիս իր ամուսնու եւ նրա տան պատիւը, այլ
ծարալայն անողորք է դէպի ամենքը, որոնք
խոչընդոտ են հանդիսանում նրա նոր կապի
վերաբերմամբ: Նա հեռացնում է Հենչէյի բո-
լոր ստերիմներին, բարեկամներին, ծառանե-
րին, իրան Հենչէյին ղէջք դարձնելով: Արեւ-
կողմից այնքան ինքնասէր է եւ հետամուտ
արտաքին ձեւական պատուի, որ վերին աս-
տիճանի դժգոհութիւն է ցոյց տալիս: Երբ մե-
ծանոցի Հենչէյը, գրաված նրանով, զըտ-
նում է եւ բերում է նրա ապօրինի երեխային:
Սկզբում Հաննան մինչեւ իսկ փորձում է ու-
րանալ երեխայի իբր լինելը, ընդունելուց յե-
տոյ էլ վարձում է նրա հետ անօրինակ կօպ-
տութիւնը: Բնութեամբ առանց մի որ եւ իցէ
բարոյական զգացմունքի, նա ցանկանում է
զիրը ունենալ եւ պատիւ վայելել հասարա-
կութեան մէջ: Բայց Հենչէյի ընտանեկան խայ-
տառակութիւնը այնպիսի սիւնաքարի բնաւոր-
ութիւն է ստանում, որ վերջ ի վերջոյ կուրս-
ցած Հենչէյի աչքերն էլ են բացվում եւ նրա
զօրեղ եւ պատուի զգացմունքով ներշնչված
հոգու մէջ սկսվում է մի զարհուրելի դրամա,
որի նկարագրութեան մէջ Հաւապման համում է
է անօրինակաբար դրամատուրգների գեղար-
ւեստականութեան Հենչէյի համար դանձու-
թեան բաժակը լցվում է նրանով, երբ նրան
հանում է ընդհանրացած յամառ լուրը, թէ
Հաննան թունաւորել է նրա աղջկան: Հետա-
քրքրական է դրամայի վախճանը. արհամար-
ված, անպատու, լաբէլի վաճառված Հենչէյը,
փոխանակ պատկուտ իր եւ իր ընտանիքի
պատուի սոսնակով անողին, ձեռք է բարձ-
րացնում իր կեանքի վրա: Սա արդէն արգա-
սիք է կուլտուրայի եւ քրիստոնէական ոգու,
որով ներշնչված են Եւրօպայի գիւղական եւ
անհասարակ աշխատաւոր դասակարգի լաւա-
գոյն ներկայացուցիչները: Այդ սիւրբ հասել է
այն աստիճանի բարոյական զարգացման, որ
զլուանք է զլուած դէպի մարդասպանութիւն:
Այս նուրբ դիտողութիւնը, որ արտայայտվում է
Հաւապմանի դրամայի լուծման մէջ, ամենա-
լաւ սպասարկ է թէ որպիսի խոր թափանցող
տաղանդ է հեղինակը:

Դրամայի ներկայացումը աղող անցաւ: Հան-
նայի դերում տիկին Մայսուբեան չորհրդ ցոյց
տուեց բացասական տիպ նկարագրելու մէջ:
Հաննայի ետական, բարոյական զգացմունքից
զուրկ, միջոցների մէջ անխօր, միայն կիրքե-

կան իրանց ահագին բարձրութիւնից, յօշափած
լինելով ուրիշ մի մահակակացու ընտանեկան
պատիւը, մինչդեռ մեղսում քրէական յանցա-
ւորը, հանրաձայնօթ գողը, սեփական ընտանի-
քի պատիւը ի ցոյց ամենքի ոտնատակ տօ ող
բախտախնդիրը վայելում է ամենից եւ ամեն
տեղ սէր, յարգանք... Խոստովանվեցէք, ըս-
թեքող, որ դժուար չէ խղճալ կամ արհամար-
անք մի գողի, լինի նա գործակատար, միլիո-
նատէր թէ համարաբանական, մի եւ նոյն է,
Բայց երբ տեսնում ես, թէ ինչպէս այդ գողը
հասարակութեան նոյն իսկ լաւագոյն մասի
կողմից վայելում է յարգանք, սէր, գտնելով
ամենուրեք գրկաբաց ընդունելութիւն, յուսա-
հատութիւնը կամայ սկսմայ պաշարում է քեզ
եւ դու, կորցնելով վերջին հաւատք դէպի
մարդիկ, ջանջարված արտով ակամայ բացա-
կանցում ես: Միթէ մի հասարակութիւն կա-
րող է հանել բարոյական այդ աստիճանի անկ-
ման: Միթէ համանման հասարակութիւնը ոյժ
կուրենայ երբ եւ իցէ սթափվել իր բարոյակա-
նանկութիւնից եւ նորից կը սկսէ ապրել
կուլտուրական ազգերին յատուկ մարդայնի
կեանքով, ղեկավարվելով անհատական ազնիւ-
անքի գործունէութեամբ, ոգեւորվելով հա-
սարակական լայն իրջանիւրով, իղձերով, յոյ-
սերով...»

Դրա մասին հետեւեալ անգամ
Շիրվանցի

բով բնակվող բնակարանները ճշգրտութեամբ արտայայտելի իր խաղի մէջ իրողը է նկատուած մի քանազան, թէ տիկինը, աչաղ տանելով իր դերը, վերջը անգոր գանձակց արտայայտելու Հաննայի հոգեկան տանջանքները, խղճի խայթոցը Բանը հէնց նրանուան է, որ Հաննան բարոյութիւն անընդունակ է խղճի վրդովման, այդ կողմից նա նոյն իսկ հրէշ է, նրա վրդովմանը խղճի տանջանքի արտայայտութիւնն է, այլ երկիւղ իր յանցանքերի համար իր կատարի բնակարանները անուանու առաջ:

Առանձին աղոյղութիւն ունէր այդ օրը պ. Պետրոսեան: Հենչելի—կատարական պիտանքի հերոսներին հեռաւար բունը եւ բարդ բնուորութիւնը նա նկարագրեց յուզիչ զրամատիզմով եւ բարձր աստիճանի գեղարուեստորէն: Մանուսկը զօրեղ տպագրութիւն գործեց նա Հենչելի վերջին մենախօսութեան ժամանակ, նրա կեանքի վճռորոշական վարկի մասին նկարագրութեան մէջ: Առանձնապէս զերամանի ստեղծարարական ընդունակութիւնների մէջ այս տարի առանձին կենդանութիւն է նկատուում:

Բաւարար էր այդ օրը եւ ամբողջ անամբը: Ինչ կը նշանակէ գեղարուեստական երկի կեանքի բնական եւ ճշգրիտ վերարտադրութիւնը կարող է միայն բնական եւ անկեղծ յոյժերով ինչ առաջ ընկեր զերասանի մէջ: Պէտք է յուսալ, որ «Կատարական Հենչել» մեր ընդհարուարից չի դուրս դալ եւ մի ներկայացումով չի վերջանալ:

Յ. Սաղաթէլեան

ՆԱՄԱԿ ԽՐԱԿՐՈՒԹԵԱՆ

Շուշի, դեկտեմբերի 17-ին
«Մշակի» № 283-ի մէջ Շուշուց Հ. Յովհաննիսեան ստորագրութեամբ մի նամակ կար, որտեղ պարտք իր թէ ցանկանում է աղաւաղված ճշմարտութիւնը պարզել: Պարտք իր ստանալու ապացուցանելու համար, փաստերը կերպարանաւորած եւ քորտրկած կերպով է երեւան հանուած, ուստի խնդրում եմ ճշմարտութիւնը պարզելու համար տեղ չնորոյն յօդուածիս «Մշակի» համարներէջ մէկում:

Յօդուածագիրը հաստատում է, որ ինքը օգոստոսի 30-ին հրատարակում է Շուշի ուսուցչութեան համար, սակայն զեր Շուշի եմ հասնում, տեսնում եմ, որ միայն III եւ IV դասարանների ընդհանուր պատմութիւնն է ինձ տուել, իսկ V եւ VI դասարաններին, այսինքն ինձ հետ պայմանագրված դասերը տուել է պ. Չիլիկարեանին: Երբ ու մի պայման է նախապէս եւ այս ամառ կաթողիկոսական կենդանով արձակված է եղել ուսուցչութիւնից, իսկ Բենիկ վարդապետը նրան պատժել է կոչել, դասեր տուել եւ պատիւը վերականգնելու: Ուրեմն, պ. Յովհաննիսեանի խօսքերից երեւում է, որ ես առանց որ եւ է պայմանի վաղել եմ Շուշի, կամ աղաչելով պաղատելով պաշտօն եմ խնդրել եւ Բենիկ վարդապետը խնայելով ինձ, իմ ընկած պատիւը վերականգնելու համար ինձ պաշտօն է տուել:

Այժմ դամ փաստերին:
Նախ, օգոստոսի 12-ին, այսինքն երբ դեռ Բենիկ վարդապետի տեսչութեան հարց չը լինէր, նորոյնի հոգաբարձուներէջ մէկը մասնաւոր նամակով, ի միջի այլոց, ինձ գրում է: «Այսօր, հոգաբարձուներից երկուք ինձ խնդրեցին, որ ես ձեզ վրա գրեմ թէ միամիտ մը նաք, ոչ մի տեղ խօսք չը տաք, տեսուչ օվ ուղում է լինի, դուք մնալու էք ձեր տեղը, ինչ կարելի է շուտով գաք, որ քննութիւններով կը հարկաւորվէք»:

Սրանից յետոյ, առանց իմ դիմելուն, օգոստոսի 26-ին, տեսուչ Բենիկ վարդապետից ստանում եմ հետեւեալ հեռագիրը: «26 ҮРО-ковъ 1200 руб. посылите, телеграфируйте: Ректоръ Беникъ Варданетъ»: Այս հեռագիրն պատասխանում եմ, որ միայն երեք տարի պայմանով կարող եմ գալ, այլապէս անկարող եմ: Օգոստոսի 29-ին ստացայ հետեւեալ հեռագիրը: «срочно, а. Жад, прощу прѣхайте, телеграфируйте»: Առանց իմ պատասխանի սպասելու, օգոստոսի 30-ին, ամառուան 8 փոստի, ստանում եմ վերջապէս իմ հեռագրի պատասխանը—«с р о ч н а я — «Выхлопотать у-ловие на три года минимум, откажите всемо-у прѣхайте, прощу васъ, ректоръ Беникъ»: Այս հեռագրից յետոյ ես համաձայնութիւն յայտնեցի: Միջի ուրեմն այս հեռագիրները պայման չէին, պ. Յովհաննիսեան: Աւելի պարզ լինելու համար պէտք է ի նկատի ունենալ եւ այն, որ ես երեք տարի Շուշու թեմական դպրոցում ուսուցիչ եմ եւ միշտ էլ ընդհանուր պատմութեան բոլոր դասերը իմ ձեռքն են եղել—այժմ երեք հեռագրով ինձ հրաւիրում են եւ ոչ մէկի մէջն էլ առարկաների անուններ չեն մշակած թէ ինչ դասեր եմ աւանդելու—որեմն ես որպէս նախկին ուսուցիչ միջի պիտի կազմակերպեմ, որ իմ դասերը չը պիտի նորից ստանձնեմ: Եթէ ինձ հրաւիրէին որպէս նոր ուսուցիչ, ինչպէս պ. Յովհաննիսեանին, միջի իմ պայմանների մէջ չը պիտի յիշելու ամանդեղիք առարկաների անունները, որովհետեւ ինձ այդպիսի բան չէր առաջարկված, եւ էլ վերադարձել եմ Շուշու որպէս նախկին ուսուցիչ մի եւ նոյն առարկաների: Երբ այս ամե-

նից յետոյ ընդհանուր պատմութեան դասերի մի մասն է իմ ձեռքը մնացել, որեմն միջի զա նշանակում է թէ նրա պայմանագրված դասերից առկա եւ ինձ են տուել: Այդ հարցի լուծումը թողնում եմ դպրոցական գործից հատկացող բանիմաց անձանտներին:

Գաղով այն հարցին, թէ է: Բենիկ վարդապետը ինձ պատժում է տուել եւ ընկած պատիւն վերականգնել, դա միմիայն պարտքի եւ արեւակայութիւնն է, որովհետեւ արձակման արժանի է այն մարդը, որը այս կամ այն կերպ իր պաշտօնին անհամապատասխան է եղել: Եթէ ներքի ինձ ասել, որ այդպիսի մի վկայութիւն ինձ համար ոչ նախկին դպրոցական վարչութիւնը, ոչ հոգաբարձութիւնը եւ ոչ էլ դպրոցական գործին ծանօթ մէկը կարող է վկայել: Ապացուց, որ ինքը հոգաբարձութիւնը զանկողութիւն էր յայտնել հրատարակել, որ նրանք իմ առաջարկած երեք տարի պայմանն ընդունեցին, որ խնդրի մէջ միակ օրինակն է, որ Բենիկ վարդապետը այդպիսի ղեկավար միջի պիտի հրաւիրէր եւ այսօր նոյն իսկ պ. Յովհաննիսեան, ձեր ներկայութեամբ չէր յայտնել, թէ ինձ, ընկած պատիւն վերականգնելու համար չէ հրաւիրել: Եթէ անցեալ ուսուսնական տարվայ վերջը ամբողջ խումբը Վեհ. կաթողիկոսի կոնգրակով պաշտօնից ազատ է համարւած եւ վերընտրութեան իրաւունք տրվել, դա չէ նշանակում թէ նրանք անենք որպէս անպէտք արձակման էին արժանի եւ նրանց պատիւը ընկած է: Պ. Հ. Յովհաննիսեան կարող է շատ բաներ ընդունել եւ զուտանցել, այդ արդէն նրա գործն է, բայց ես իմ պատիւը երբեք ընկած չեմ համարել: Եթէ յօդուածագիրը մի ուրիշ գործին անտեղեակ անձնաւորութիւն լինէր, ի հարկէ եւ չէի կարող անհրաժեշտ մեղադրել, բայց որովհետեւ այդ ամենը նրա ներկայութեամբ շատ անգամ խօսված է եւ եթէ անգամ մի երկու բան չը գիտեմար էլ, այնուամենայնիւ նա որպէս Բենիկ վարդապետի բարեկամ եւ գործավար ընկեր կարող էր ստուգել եւ իմանալ, հետեւապէս սխալների մէջ չընկնել: Այս ամենից յետոյ թէ ինչն է պ. Հ. Յովհաննիսեանը պաշտել գրել ինձ համար, շատ պարզ է. այնպէս որ ձեր եւ ձեր խորհրդականների փորձաքաղ, յետին միտումները եւ վերջնական նպատակը հակառակ է—սեղծութիւնը փաստերը որպէս կուղղէք, ձեր ոչ մի որդաղից չեմ վախենալ:

Ա. Չիլիկարեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Նորերս վախճանված Շուշի արքեպիսկոպոսը, բայցի «Մշակի» անցեալ համարում յիշված 5000 ռուբլուց, որ կենդանութեան ժամանակ յանձնել էր Ներքիսեան դպրոցին, կտակել է 2000 ռուբլի չլմիածնի ձեռնարանին, իսկ իր ունեցածից մնացած 2,000 ռուբլին կարգադրել է ծախսել կէսը իր թաղման վրա, կէսն էլ իր գերեզմանի վրա յուշարձան կանգնեցնելու համար:

Մեզ հաղորդում են, որ կաթողիկոսի կողմից իր ներկայացուցիչ ուղարկված են ներկայ լինելու Շուշի արքեպիսկոպոսի թաղման կորիւն եւ Տիրայր վարդապետները:

Յունվարի 8-ին թիֆլիսի քաղաքային խորհրդում տեղի ունեցաւ քաղաքային վարչութեան մի անգամի ընտրութիւնը հերթով դուրս գնացող իշխան Ա. Արղութեան-Երկայնաբազուկի տեղ: Վերջինը նորից ընտրվեց քաղաքային վարչութեան անդամ 30 ձայնի առաւելութեամբ ընդդէմ 1-ի:

Յունվարի 8-ին ինժեներ Բօբի ներկայացրեց թիֆլիսի քաղաքային վարչութեան ֆունկիլու-լորի շինութեան տեխնիքական նախագիծը: Ինչպէս յայտնի է, ֆունկիլուլորը պէտք է լինի Միլիտարի ղեկավար զէպի ս. Դաւթի սարի գլուխը: Բօբի ներկայացրած նոր նախագիծով ֆունկիլուլորի գիծը սկսվում է քաղաքային ջրանցքի ամբարի մոտից եւ բարձրանում է ուղիղ ղեկով սարի գլուխը, այնտեղ, ուր այժմ գտնվում է «ՕՊՏԵԼՆԻԿ» կոչված խանութը: Ս. Դաւթի եկեղեցուն մօտ ֆունկիլուլորը կուռնեայ մի կայարան, ուր ճանապարհորդները հնարարութիւն կուռնեան դուրս գալու: Կայարանը կը լինի փոքր ինչ բարձր այն տեղից, ուր այժմ գոյութիւն ունի մի շաւղ, որով ս. Դաւթի եկեղեցուց կարելի է բարձրանալ սարի գլուխը:

Այս տարվայ ընթացքում, ինչպէս հաղորդում են մայրաքաղաքի լրագիրները, Պետերբուրգում կը կայանայ տեխնիքական եւ պրոֆեսիոնալ կրթութեան ասպարէզում գործողների համաժողով:

«Руч. Вѣд.» լրագիրը հաղորդում է, որ ժողովրդական լուսաւորութեան միսիոնարութիւնը մտադրութիւն ունի բանալ Սիբիրում էլի մի նոր բարձրագոյն ուսումնարան:

ԱԼԷՔՍԱՆԴՐՈՊՈԼԻՑ մեզ գրում են, որ կաթողիկոսը մտադիր է մի քանի օրից յետոյ ճանապարհ ընկնել ղեպի Թիֆլիս:

ՆՈՒ-ՆԱԽԻՉԵՆԻՍԵԱՆԻՑ մեզ գրում են. «Յունվարի 1-ին Նոր-Նախիջևեանի ակադեմիոյում պարանոցէս էր: Նոր-Նախիջևեանցիները չեն յաճախում ակադեմիոյ, բայց յունվարի 1-ի պարանոցէսին դահլիճը լիքն է միշտ: Բոլորը դալիս են իրանց ցոյց տալու, մանաւանդ կանայք եւ օրիորդներ շքեղ զարդերով պնդված: Այս տարի հետեւեալ անխորժ ղեպը պատահեց: Կ. Պօլյանցի մտնեում է Միսաս Բերբերեանին եւ ասում է, որ նա իրաւունք չունի իրբու հէր մտնել ակադեմիոյ, այլ պէտք է լինի անգամ ակադեմիոյ եւ վճարէ 25 ռ.: Պարանոցը առջ տաք վիճում են. վրա է հասնում Միսաս Բերբերեանի եղբայրը—Մուլէս Բերբերեանը եւ երբ վերջինին ցոյց են տալիս ակադեմիոյ կանոնադրութիւնը, պարտք տաւնց այլ եւ այլի անուն է եւ պատուում է կանոնադրութիւնը: Յունվարի 3-ին կայացաւ ընդհանուր ժողով, որը քննելով գործը, ի միջի այլոց որոշեց Մուլէս Բերբերեանին այլ եւ չը համարել անդամ ակադեմիոյ եւ հետագանի նրան առ միշտ ակադեմիոյց, իսկ Միսաս Բերբերեանին չընդունել ակադեմիոյ ոչ իբր հէր եւ ոչ իբր անդամ»:

ԿԱՂՁՈՒԱՆԻՑ մեզ գրում են. «Կաղզուանը այս տարի տարօրինակ աշուն անցկացրեց: Ծերերից ոչ ոք չէ տեսել, որ ղեկտեմբեր ամիսը առանց ձիւնի մնար: Այսօր, յունվարի 2-ին, առաջին անգամ երկինքը ամպեց եւ ձիւն է դալիս. չորհրդե անանային չոր եղանակներով միջերը բաւականաչափ է ժամութիւն է տիրում: Այլիւրի պուրջ հրապարակի վրա վաճառվում է 80—70 կոպէկից ոչ աւել. իսկ գարեիը 40 կոպէկ»:

ՇՈՒՇԻՑ մեզ գրում են. «Ճղանակները աշնանային են մեզ մօտ. ձիւնը բնաւ չը կայ, այն ինչ նախորդ տարիները այս ժամանակներում քաղաքը եւ շրջակայքը ծածկված էին ձիւնի հաստ շերտով»:

ԱԼԷՔՍԱՆԴՐՈՊՈԼԻՑ մեզ գրում են. «Ջորջի-նէքի հանդէպ այս տարի մեղանում առանձին փառաւորութեամբ կատարվեց, որովհետեւ Վեհափառ կաթողիկոսը, որ երկու օր առաջ եկել էր այստեղ, ինքն անձամբ կատարեց Պաշտօնը զգեցնու ծէսը»:

ՆՈՒ-ՆԱԽԻՉԵՆԻՍԵԱՆԻՑ մեզ գրում են. «Յունվարի 3-ին Հոբիսիմեան դպրոցի դահլիճում կանանց Խնամատար ընկերութիւնը իր ասնիկների համար օտարել էր տօնատնու Երեւանները ստացան նուէրներ. անվերջ էր նրանց ուրախութիւնը: Պատիւ է բերում կանանց ընկերութիւնը, որ անտես չէ անում իր ասնիկներին եւ ամեն տարի չէ խնայում ջանք եւ փող նրանց զուարճացնելու համար»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԳԻԱՅԻՑ

Վան, դեկտեմբերի 12-ին
Անցեալ օր տեսայ Աւետիք քահանայ Շաղոսան, որ կառքի մը մէջ նստած՝ արարչաւ կանցնել ղեպի դօմինիկեաններու մատուռը հոս պատարագ խօսելու համար:

Մէկ ու կէս տարի անալ, երբ «Մշակը» Շաղոսանի կաթողիկոս ըլլալու լուրը հաղորդեց եւ ձայնը հոս հասաւ, մենք չէինք ուզեր կամ չէինք կրնար հաւատալ, եւ կը յուսայինք որ, զանի կրկին անգամ հոս տեսած ատենինս, մայրենի եկեղեցիին մէջ պիտի տեսնեք: Սակայն այսօր, մեր առջեւ պարզուած իրականութիւնը, մեր յոյսերու պարարնքը կը բերէ իր ամբողջ ցաւալի ու տխուր հետեւանքներով...
Յայտնի է, որ տեղույս դօմինիկեան հայրերը հայր Անտօնը փախուցցին իրենց գործիք չլլալուն համար, ըստ որում հոս կարող կղերի մը պէտք ունենին: Այս պատճառաւ Չերմոնանց հաւատացեալներէն Բիւզանդեան ու Նաթանան Շաղոսանը հոս կանչելու զարգաւարը կը զգանան, ու այդ մտքով նամակ մը կը գրեն անոր ի Սալմաստ: Շաղոսան, փառասէր ու յեղիցուկ, չնապաստա հոս կը հասնի ամիսը 5-ին, վանքի հասարակութեան իր վրա ունեցած համարումը չահագործելու եւ հ. Անտօնի թախուր թողած աթոռին վրա բաղնելու նպատակաւ: «Ջուր ջանք, անօգուտ վատաւար»:

Երբ Աւետիք քահանայ Շաղոսան Սալմաստէն ճամբայ կենէր Վան գալու, հասարակութեան մօտ ունեցած իր համարումն ալ վանէն ղեպ արեւմուտք կը փախէր իսպառ երթալ կորսուելու համար զինքը դաւանանող այդ տէրտէրի ձեռքէն...
Շարաթէ մը ի վեր ամենուն խօսակցութիւնը Շաղոսանին շուրջը կը դառնայ, մինչ Շաղոսանն ալ հ. Անտօնի բոլորովը չը զօմինիկեանները անոր վրա սուր փոշի շարած են իրենց հաշտին...
Դեռ Շաղոսանի կաթողիկոսութեան պատճառներուն մասնաւորութիւնները չենք զիտեր թէն, որ անշուշտ նիւթական կամ բարոյական գեղեցումը մը ըլլալու է մայր-եկեղեցուն ղեպ, առկայն վերջը շատ լաւ ճանաչանք: Իր փառասէր, յեղիցուկ եւ իր բարոյութիւն մարտոց շուտով սրբելի դատնալու եւ շատ շուտով ալ անոնցմէ ճանճարնալու եւ անոնք ալ իրմէն ճանճարնալու բնակարանութիւնով, հոս ալ շատ երկար կեանք չի պիտի ունենայ եւ դուրսէ ատր համար է, որ իր ընտանիքը Սալմաստ թողուցր է: Շաղոսան իր այս ձեռնարկով շատ տխուր տպագրութիւն մը կը թողու մեր վրայ, ու մեզ մտածել կուտայ թէ, մարդիկ իրենց շահուն, իրենց փառքին, իրենց կրթելին ու ետին համար որքան կրնան ստորանալ իյնալ ու գունափոխուլ...
Խորեն—Ա.

Անոր ճամբայ կենէր Վան գալու, հասարակութեան մօտ ունեցած իր համարումն ալ վանէն ղեպ արեւմուտք կը փախէր իսպառ երթալ կորսուելու համար զինքը դաւանանող այդ տէրտէրի ձեռքէն...
Շարաթէ մը ի վեր ամենուն խօսակցութիւնը Շաղոսանին շուրջը կը դառնայ, մինչ Շաղոսանն ալ հ. Անտօնի բոլորովը չը զօմինիկեանները անոր վրա սուր փոշի շարած են իրենց հաշտին...
Դեռ Շաղոսանի կաթողիկոսութեան պատճառներուն մասնաւորութիւնները չենք զիտեր թէն, որ անշուշտ նիւթական կամ բարոյական գեղեցումը մը ըլլալու է մայր-եկեղեցուն ղեպ, առկայն վերջը շատ լաւ ճանաչանք: Իր փառասէր, յեղիցուկ եւ իր բարոյութիւն մարտոց շուտով սրբելի դատնալու եւ շատ շուտով ալ անոնցմէ ճանճարնալու եւ անոնք ալ իրմէն ճանճարնալու բնակարանութիւնով, հոս ալ շատ երկար կեանք չի պիտի ունենայ եւ դուրսէ ատր համար է, որ իր ընտանիքը Սալմաստ թողուցր է: Շաղոսան իր այս ձեռնարկով շատ տխուր տպագրութիւն մը կը թողու մեր վրայ, ու մեզ մտածել կուտայ թէ, մարդիկ իրենց շահուն, իրենց փառքին, իրենց կրթելին ու ետին համար որքան կրնան ստորանալ իյնալ ու գունափոխուլ...
Խորեն—Ա.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ամերիկացիները դուրսէնք Ֆիլիպպինս կղզիներում մինչեւ հիմա մնում է անորոյ: Ամերիկական հրամանատարներին չաջողեց ոյժի եւ սպառնալիքների գործութեամբ խաղաղացնել կղզիները, այս պատճառով նրանք տիրու են դիմել մեզ միջոցների: Ինչպէս հաղորդում են «Lokal Anzeiger» լրագրին, Վաշինգտոնի անտառը ընդունեց մի առաջարկութիւն, որով Միացեալ-Նահանգների գործը Ֆիլիպպինս կղզիներում պէտք է ձգտեն մի նպատակի—վերականգնելու խաղաղութիւնը: Այս առիթով կառավարութիւնը հրաւերում է ֆիլիպպինցիների պարագլուխներին նրա համար, որ հարցնէ նրանց կարծիքները եւ իմանայ նրանց պայմանները: Այսու ամենայնիւ, ամերիկական կառավարութիւնը մեծեց մի այլ առաջարկ—զաղաքացիներու պատերազմական գործողութիւնները ֆիլիպպինս կղզիներում եւ յայտնելու ընդհանուր ներումն:

Լուրերը Ֆրանսիայի եւ Ռուսաստանի մէջ ծագած տարաձայնութիւնների մասին հարկաւորեցին ուսուս հետաքրքական գործակալութեանը ուղարկել Պարիզի լրագրիներին հետեւեալ բովանդակութեան հեռագիրը: «Մի քանի անգլիական եւ դերմանական լրագրիները, հեշտ հասկանալի նպատակով, այնպետեւ են լուրեր տարածել, թէ իբր Պետերբուրգի եւ Պարիզի կառավարութիւնների յարաբերութիւնների մէջ տեղի են ունեցել փոփոխութիւններ: Այս առիթով մենք յանձնարարութիւն ենք ստալել յայտնելու, որ այդ յարաբերութիւնները երբէք այնքան սրտագին, անկեղծ եւ փոխադարձ փառաւորութեամբ համակրած չեն եղել, ինչպէս այժմ: Այստեղի քաղաքական շրջաններում չափազանց զարմացած են, որ այդ աղմկայող լուրերը Պարիզի ժամուկի մի մասի մէջ արձանագրեց են գտնուած այն օրակին, երբ երկու բարեկամ եւ դաշնակից երկիրների միաբան գործողութիւնը խիստ անհրաժեշտ է ընդհանուր խաղաղութեան համար»:

Պիկինի եպիսկոպոս Թավիէ, Պարիզ հասնելուց յետոյ, ընդունեց մի քանի ժողովախօսների, ի միջի այլոց եւ «Temps» լրագրի աշխատակցին Թավիէ կարծիք յայտնեց, թէ ծարուպան պէտք է խաղաղութիւնը վերականգնելու գործում զօրաւորութիւններ չը յարուցանէ ինչպէս կառավարութեան առաջ, քանի որ այդ կառավարութիւնը երեսուն տարի շարունակ անընդհատ զիջողութիւններ է արել եւ յոյսայիններին: Չիտանալ անկախութիւնների ծագման պատճառը Թավիէ վերագրում է դերմանայինների անգլիկաններին Յզեա-Չժօում, որտեղից եւ սկսվել է շարժումը:

Բոմբէյից գրում են Կ. Պոյի թիւրքական լրագիրներին, որ մանմեղանա հոգեւորականութեան պրօպագանդան հնդկական մասնաբաժանների մէջ յօդուած թիւրքերայի եւ նրա կարիքների անալիզի աղոյղութիւն է գտնուած Այսպէս, օրինակ, մօլա Արեւիկիւմ, որ քիչ ժամանակ առաջ 1,000,000 ռուբլի էր ուղարկել Մեկկայի երկաթուղու կառուցման համարման կամ կօմիտեանին, հաւաքել եւ ուղարկել է մօտ օրերումս 350,000 ռուբլի եւս: Համարման կազմակերպող քաղաքով մօլաների թիւը հինգ կական թիւրքերից եւ կղզիների վրա մի քանի հազարի է հասնում, որոնց չեմ հրաւեր

